DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2F8CEF5871C

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-63

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄՆՆԴԻ ԱՌԱՔՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թ.-ի մարտի 19-ին նահանգապետը հրապարակեց Գործադիր հրաման N-33-20-ը, և Կալիֆորնիայի հանրային առողջապահության պաշտոնակատարը հրապարակեց համապատասխան հրամանը՝ ըստ որի մարդիկ պետք է տանը մնան, բացի անհրաժեշտության դեպքում՝ ըստ որոշակի բացառությունների; և

Հաշվի առնելով, որ Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության վարչությունը հրապարակել է «Տանն ավելի անվտանգ է» հրամանը, որը վերանայվել է 2020 թվականի մայիսի 13-ին, և պահանջում է, որ մարդիկ մնան իրենց տներում՝ որոշակի բացառություններով, այդ թվում՝ հիմնական ապրանքների ձեռքբերման համար, ինչպիսիք են՝ սնունդ և անհրաժեշտ պարագաներ, և պահանջում է ոչ էական

DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2F8CEF5871C

նշանակության բիզնեսների փակումը, մինչև հետագա ծանուցումը; և

Հաշվի առնելով, որ վիրուսի տարածումը նվազեցնելու և հանրային առողջությունը պաշտպանելու նպատակով՝ «Տանն ավելի անվտանգ է» հրամանը քաղաքի ռեստորաններին արգելում է ներսում ճաշելու ծառայություններ մատուցել՝ սահմանափակվելով միայն առաքումով ու պատվերը հաճախորդների հետ տանելու առաջարկներով; և

Հաշվի առնելով, որ ռեստորաններին միայն առաքումով ու պատվերը հաճախորդների հետ տանելու առաջարկներով սահմանափակելը միայն հանկարծակի և կտրուկ ֆինանսական բեռ է առաջացրել շատ ռեստորանների, մասնավորապես՝ այն փոքր բիզնեսների համար, որոնք արդեն իսկ գործում են քիչ շահույթով՝ այդպիսով ավելացնելով ոլորտի ֆինանսական լարվածությունը, որը նախորդում էր COVID-19- ի ճգնաժամին; և

Հաշվի առնելով, որ հասարակության շահերից է բխում՝ միջոցներ ձեռնարկել՝ պատվերը դուրս տանելու և առաքման ծառայություններից ստացված ռեստորանի եկամուտները առավելագույնի հասցնելու համար, որոնք ներկայումս հանդիսանում են այս փոքր ձեռնարկությունների եկամտի միակ աղբյուրը՝ ռեստորաններին հնարավորություն տալով գոյատևել այս ճգնաժամը և Քաղաքում մնալ որպես աշխատանքի և թաղամասերի կենսունակ աղբյուր; և

Հաշվի առնելով, որ շատ հաճախորդներ օգտագործում են երրորդ կողմի ծրագրեր և կայքեր՝ ռեստորաններից պատվիրելու և առաքելու համար, և այդ երրորդ կողմի հարթակները ռեստորաններից գանձում են վճարներ, որոնք տատանվում են յուրաքանչյուր պատվերի գնի 12%-ից 30%-ի սահմաններում, ինչպես և այլ գործարքային վճարներ;

Հաշվի առնելով, որ բաղադրիչներ և պարագաներ ձեռք բերելու գները նույնպես աճել են՝ COVID-19 ճգնաժամի պատճառով; և

Հաշվի առնելով, որ ռեստորանները և մասնավորապես նրանք, որոնք փոքր են և ունեն քիչ մասնաճյուղեր, ունեն սահմանափակ բանակցային ուժ՝ երրորդ կողմի հարթակների հետ ցածր գների շուրջ բանակցելու համար՝ ըստ շուկայում երրորդ կողմի հարթակների հագեցվածության մակարդակի, և շատ ծանր ֆինանսական վիճակում գտնվող փոքր ռեստորանները բախվում են COVID-19 ճգնաժամին; և

Հաշվի առնելով, որ ստորև սահմանված գումարի չափով պատվերների միջնորդավճարները սահմանափակելը կծառայի օրինական հանրային նպատակին՝ այս արտակարգ իրավիճակների ժամանակ ծանր վիճակում գտնվող ռեստորանների ֆինանսական բեռը թեթևացնելու համար, միաժամանակ չափից դուրս չծանրաբեռնելով երրորդ կողմի հարթակներին, քանի որ այդ միջնորդավճարը համարվում է ողջամիտ, և երրորդ կողմի հարթակները կշարունակեն շահութաբեր լինել։

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հասարակական հրամանների ժամկետների երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ Խորհուրդն

DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2F8CEF5871C

այսուհետև ընդունում է հետևյալ հանրային հրամանը («Հրամանը»)

ԲԱԺԻՆ 1.

A. Սահմանումներ: Սույն Հրամանի նպատակների համար կիրառվում են հետևյալ սահմանումները.

1. «Ընդգրկված հաստատություն» նշանակում է այն ռեստորանը, որը մեկ առևտրային գործարքով, համացանցի միջոցով, ուղղակիորեն կամ երրորդ կողմի սննդի առաքման ծառայության միջոցով հաճախորդներին առաջարկում է սննդի վաճառք և նույն օրը առաքում՝ քաղաքի մեկ կամ մի քանի մանրածախ վայրերից: «Ընդգրկված հաստատությունը» չպետք է ներառի որևէ ռեստորան, որը բավարարում է ստորև նշված «Ֆորմուլա ռեստորանի» սահմանմանը:

2. «Առաքման վճար» նշանակում է երրորդ կողմի սննդի առաքման ծառայության կողմից գանձվող վճար՝ սննդի ծառայության հաստատությանը առաքման ծառայություն մատուցելու համար, որը հաճախորդներին այդ հաստատությունից առաքում է սնունդ: Այս տերմինը չի պարունակում որևէ այլ վճար, որը երրորդ կողմի սննդի առաքման ծառայությունը կարող է գանձել սննդի ծառայության հաստատությունից, ինչպես օրինակ՝ երրորդ կողմի սննդի առաքման ծառայության հարթակում սննդի ծառայության հաստատության ներառման կամ գովազդի վճարները կամ առցանց պատվերի մշակման հետ կապված վճարները:

3. «Ֆորմուլա ռեստորան» նշանակում է ռեստորանի այն տեսակը, որն ունի տասնմեկ կամ ավելի վայրերում գործող մասնաճյուղեր, կամ դրանց տեղական հողօգտագործման իրավունք կամ արդեն հաստատված թույլտվության իրավունք, որը գտնվում է աշխարհի ցանկացած վայրում: Ի լրումն տասնմեկ գործող հաստատությունների կամ տեղական հողօգտագործման կամ շահագործման համար հաստատված թույլտվության իրավունքների՝ բիզնեսը պահպանում է երկու կամ ավելի հետևյալ հատկանիշները՝ ապրանքների ստանդարտացված կարգ, ստանդարտացված ֆասադ, ստանդարտացված դեկոր և գունային սխեմա, համազգեստ, ստանդարտացված նշան, ապրանքային նշան կամ սպասարկման նշան:

4. «Առցանց պատվեր» նշանակում է հաճախորդի կողմից երրորդ կողմի սննդի առաքման ծառայության հարթակի միջոցով կամ դրա օգնությամբ հաճախորդի կողմից տեղադրված ցանկացած պատվեր, ներառյալ՝ հեռախոսային պատվեր:

5. «Պատվերի ընդհանուր գին» նշանակում է առցանց պատվերի մեջ պարունակվող ապրանքների ընդհանուր գինը, որը նշված է սննդի ծառայության հաստատության ճաշացանկում, որտեղից պատվերը կատարվում է: Նման տերմինը չի ներառում հարկեր, թեյավճարներ և այլ վճարներ, որոնք կարող են ներառվել հաճախորդի առցանց պատվերի ընդհանուր արժեքի մեջ:

DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2F8CEF5871C

6. «Ռեստորան» նշանակում է և ներառում է ցանկացած «Ռեստորան, լիարժեք սպասարկում», «Ռեստորան, արագ սնունդ» և «Ռեստորան, վաճառասեղանի ծառայություն՝ սահմանափակ նստելու տեղով», ինչպես սահմանված է Գլենդելի քաղաքային օրենսգրքի 30.70.190 բաժնում: «Ռեստորան» նշանակում է և ներառում է սննդի ցանկացած այլ հաստատություն՝ ներսում ճաշելու ծառայությունով, որտեղ արգելված է կամ սահմանափակվում է ներսում ճաշելը՝ ըստ Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության վարչության «Տանն ավելի անվտանգ է» հրամանի:

7. «Երրորդ կողմի սննդի առաքման ծառայություն» նշանակում է ցանկացած կայք, բջջային հավելված կամ այլ ինտերնետային ծառայություն, որն առաջարկում է կամ կազմակերպում է սննդի և խմիչքների վաճառք՝ պատրաստված և նույն օրվա առաքումով կամ նույն օրվա պատվերը վերցնելու հնարավորությամբ՝ քաղաքում տեղակայված սննդի սպասարկման ոչ պակաս, քան 20 հաստատություններից, որոնք սեփականաշնորհված են կամ շահագործվում են տարբեր անձանց կողմից:

B. Հայտարարված արտակարգ դրության ժամանակ վճարների սահմանները: Արտակարգ դրության գործողության ժամանակահատվածում (ինչպես սահմանված է ստորև) անօրինական կհամարվի, եթե երրորդ կողմի առաքման ծառայությունը ընդգրկված հաստատությունից գանձի վճարներ, ներառյալ՝ առաքման վճար, ծառայության վճարներ և պատվերի մշակման այլ վճարներ, որոնք ընդհանուր առմամբ կազմում են առցանց պատվերի գնի ավելի քան 15%-ը:

C. Վճարների հաշվետվություն: Երրորդ կողմի առաքման ծառայության կողմից հաճախորդին կամ ընդգրկված հաստատությանը տրված յուրաքանչյուր անդորրագիր հստակ պետք է նշի գանձվող վճարները, վճարված թեյավճարները և ընդգրկված հաստատության կողմից առաջարկվող ցանկացած զեղչ:

D. Ուղղակի թեյավճարներ ընդգրկված հաստատություններին: Ըստ ընդգրկված հաստատության հայեցողության՝ երրորդ կողմի սննդի առաքման ծառայությունները իրենց հարթակում կարող են հաճախորդների համար ապահովել մեխանիզմ, որպեսզի հնարավոր լինի թեյավճար թողնել ընդգրկված հաստատություններին: Այդ վճարներն ամբողջությամբ տրամադրվում են ընդգրկված հաստատությանը՝ նույն ժամանակ, երբ երրորդ կողմի սննդի առաքման ծառայությունը տրամադրում է այլ վճարումներ ընդգրկված հաստատությանը:

E. Գործող ժամանակահատված: Սույն Հրամանն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 3-ից և ավարտվում է այն ժամանակ, երբ Գլենդել քաղաքում դադարեցվում է արտակարգ դրությունը, որը կապված է COVID-19-ի հետ («Գործող ժամանակահատված»):

F. Արտոնյալ ժամանակահատված: Երրորդ կողմի սննդի առաքման ծառայության համար սույն Հրամանի խախտում չի համարվի այն դեպքը, երբ 2020 թվականի հունիսի 3-ից մինչև 2020 թվականի հունիսի 10-ը ընկած

DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2F8CEF5871C

ժամանակահատվածում իր ծառայություններից օգտվելու համար առցանց պատվերի համար սահմանվում է վճար, որը կազմում է նման առցանց պատվերի ընդհանուր գնի ավելի քան 15%-ը՝ այն պայմանով, որ մինչև 2020 թվականի հունիսի 17-ը ընդգրկված հաստատությանը կվերադարձվի միջնորդավճարի այն մասը, որը գերազանցում է պատվերի ընդհանուր գնի 15%-ը:

G. Տույժեր և հարկադիր կատարումներ:

1. Եթե երրորդ կողմի սննդի առաքման ծառայությունը ընդգրկված հաստատությունից գանձում է սույն հրամանը խախտող վճարներ, ապա ընդգրկված հաստատությունը գրավոր ծանուցում է ներկայացնում երրորդ կողմի սննդի առաքման ծառայությանը՝ հայցելով փոխհատուցում՝ յոթ օրվա ընթացքում: Եթե երրորդ կողմի սննդի առաքման ծառայությունը յոթ օր հետո չի տրամադրում պահանջված փոխհատուցումը, կամ երրորդ կողմի սննդի առաքման ծառայությունը շարունակում է գանձել սույն հրամանը խախտող վճարներ՝ նախնական ծանուցումից և փոխհատուցման յոթօրյա ժամկետից հետո, ապա ընդգրկված հաստատությունը կարող է գործադրել սույն հրամանը՝ քաղաքացիական գործողության միջոցով վնասի փոխհատուցման և դատական արգելքի օգնություն պահանջելով: Ցանկացած նման գործողության մեջ գերիշխող կողմն իրավունք ունի փաստաբանի վարձատրության ողջամիտ փոխհատուցման:

2. Սույն Հրամանով նախատեսված խախտումները հավաքվում են ամեն օր և յուրաքանչյուր ընդգրկված հաստատությունից գանձված վճարի համար, որը խախտում է սույն Հրամանը: Սույն հրամանի համաձայն լիազորված ցանկացած քաղաքացիական տույժ վերականգնելու ընթացակարգը ենթակա է Քաղաքի վարչական լսման գործընթացին: Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից

DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2F8CEF5871C

սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից 2020 թվականի հունիսի 2-ին:

Քաղաքապետ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Քաղաքային խորհրդի քարտուղար

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ)
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ) SS.
ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ)

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-63 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի հունիսի 2-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան
Դեմ՝ Չկա
Բացակա՝ Չկա
Ձեռնպահ՝ Չկա

Քաղաքային խորհրդի քարտուղար

ՈՐՊԵՍ ՁԵՎ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	
ԱՆՈՒՆ	Michael J. Garcia
ՊԱՇՏՈՆ	Քաղաքի դատախազ
ՍՏՈՐԱԳՐ.	Michael J. Garcia
ԱՄՍԱԹԻՎ	Հունիսի 3, 2020